

Չարց Եթե էլեկտրամատակարարման ընդհատումը տեղի է ունեցել առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման արդյունքում, ապա մատակարարը ի՞նչ ժամկետում է պարտավոր վերականգնել սպառողի էլեկտրամատակարարումը:

Պատասխան Եթե էլեկտրամատակարարման ընդհատումը տեղի է ունեցել առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման արդյունքում, ապա մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել վերջինիս կողմից տեղեկացվելուց հետո ոչ ուշ, քան՝ 1) 2 ժամում՝ Լեռնային Ղարաբաղի Չանրապետության քաղաքային համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում՝ 2) 4 ժամում՝ Լեռնային Ղարաբաղի Չանրապետության գյուղական համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում՝ 3) 16 ժամում՝ Լեռնային Ղարաբաղի Չանրապետության ողջ տարածքում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրերից դուրս: Մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը վերականգնելուց հետո պարտավոր է նրա հետ կազմել ակտ՝ էլեկտրամատակարարման ընդհատման և վերականգնելու ամսաթվի ու ժամի վերաբերյալ: Ակտը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկը տրվում է սպառողին, իսկ մյուսը պահվում է մատակարարի մոտ: Մատակարարը պարտավոր է վարել այդ ակտերի հաշվառման առանձին գրանցամատյան, որում առնվազն պետք է նշվեն՝ 1) Չոսանքազրկված սպառողի բնակության վայրը, հասցեն և հեռախոսահամարը, 2) Ընդհատման մասին տեղեկանալու ամսաթիվը և ժամը, 3) էլեկտրամատակարարման վերականգնման ամսաթիվը և ժամը, 4) Կազմված ակտի հերթական համարը, կազմման ամսաթիվը և ժամը: Մատակարարը պարտավոր է գործադրել բոլոր հնարավոր միջոցները սույն գլխում նկարագրված դեպքերում՝ սպառողի էլեկտրամատակարարումը հնարավորինս կարճ ժամկետում վերականգնելու համար: